

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարձարկոյ համար	
Տարեկան	10 Ֆր.
Վեցամսեայ	5 »
Սրբապատկանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Սվերխայի համար	
Տարեկան	2.00 Ֆր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ	

Իսկանդրական տոյր ստույիկ երեսիկ համար 40 սանթիմետր հ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմետր հ. երեսիկ ան ի անգլաներու համար 20 010 զեղք կրկայ :

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ և գրամ գրկել
Խնդրագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կոմիտեի և չին տոյր

(ԿԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԿԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊՈՆԵՐՈՒՅԻՆ

Բացէք «Հայրենիք» շաբաթավերջին 27 թիւը, ձեր աչքին առջեւ պիտի պարզուի յուզիչ ու սրտամոմոք տեսարան մը: Թաւաղներով և կանանչներով բոլորուած միայրակ պարզ բնակարան մը: Գրան առջեւ ահիպարանոց իրիվար մը թամբուած և ահանջները ցցած կարծես կազմ իռնչով: Վելելան՝ պարթեւաճառակ, հուժկու, յաղթանդամ Պոէր մը, ուսնդանով կախած փայլուն փողփողուն հրացան մը, որուն մահահոտ փողին ծայրը կերեւեայ լայնեղջր գրկարկին քովէն: պինդ մեղմած է անիկա իր հայրենի բաղուկներուն մէջ վարթ շուրթներով, անմեղունակ իր մէկ հասիկ զաւակը, սրտին հատորիկը, և անոր վարթ այտերուն վրայ հայրական տաք տաք ու թերեւս վերջին համբոյրներ կը գրոշմէ:

Դէմը կանգնած է եւրոպական տարազով շնորագեղ, մանկամարդ Պոէրուհի մը, որ իր քնքոշ մայրենի բաղուկները բացած՝ անխռով կսպասէ իր կուզէն բրգած ոսկի գանձին յանձնումին: ասոր ետին կը կենայ գլխիկոր կին մը, ծածկած իր դէմքը հանգրիծած գոգնոցին ծայրովը: յայտնապէս յոյց չի տալու համար յորդահոտ արցունքները, յայտարար նշաններ իր դառնակակիծ սորմոքին և ներքին ալիկոծ յուզումներուն, գրանը մէջ խափշիկ մը՝ հանգիստ տես այս յուզիչ տեսարանին՝ անտարբեր նայուածքով:

Այս տողերը գրելէս շատ առաջ Պոէրը մեկնուած է պատերազմի դաշտը: և իր սիրական կողակցին բռնով: «Հայրենիք» ձայնը կը կուչէ զիս, կերթամ սիրայոժար իմ պարտականութիւնս կատարելու: Եթէ բախտին բերումով չի կարողանամ ողջ առողջ վերադառնալ ընտանեկան երդիքիս տակ, ինչոքիմ քեզէ որ խնամով մեծցնես իմ պղտիկս և քուկինդ և անոր սորվեցնես միայն և միմիայն իր

հորը և հայրենիքին վրէժը լուծել Ալպիոնի զաւկներէն»:

Կողակցն անվրդուզ կը պատասխանէ. «Գնա սիրելիս, քանի որ հայրենիքդ պէտք ունի բաղուկներուդ, քու ուժիդ, մի դանդաղիր, գնա, գնդակներդ սուղի ծախէ, և զգացուր այդ համայնակու Ալպիոնի լիճ՝ դժուար է խաղալ ժողովուրդի մը ճակատագրին հետ: չեմ ներեր երբէ՛ք որ թշնամիին գրեղակին կուսակդ դարձնես: Կը մաղթեմ որ յաղթական ու կենդանի վերադառնաս պատերազմի դաշտէն: Իսկ երբ մաղթանքներս անլուելի մնան առ այժմ, ապագային անպատճառ պիտի իրագործուին անոնք, վառնչի ապագան կը կրեմ իմ բաղուկներուն մէջ»:

Ես ալ կը մաղթեմ որ մեր բոլոր մայրերը այս պոէրուհիին օրինակին հետեւին, և իրենց զաւակներուն պալու լները քակած ատենն իսկ սորվեցնեն անոնց սուրի ու գնդակի հետ խաղալ, անոնց նորարարող մտքերուն մէջ գրոշմելով վրիժառու թեան նուիրական սուրբ ու պաշտելի գաղափարը, որու միջոցաւ միայն պիտի կարողանանք մեր գատին յաջող ելք մը տալ մեր իսկ ձեռքով և եւրոպական ոչն կարեկից այլ համակիր օժանդակութեամբը:

Այժմ էֆէնտին արդէն բաժնետերերէ ընկերութիւն մը կազմած է Սալոնիքի մէջ ելեքարական խոշոր կէկ կայարան մը հիմնելու քաղաքին ելեքարական լոյս և հանրակառք շինելու համար:

Գործին սեղեակի փորձառու անձեր կըսեն թէ խիստ փառասուր և շահեկան ձեռնարկ մըն է Սալոնիքի պէս բաղամարդ վաճառաչան ու բանուկ քաղաքի մը համար:

Ի՞նչ կը կարծէք, եսական ու շահախնդիր անյղիացի մը, Այժմի մը պէս սասանայ արարած մը՝ անանկ իղուր սեղը կը պաշտպանէ՞ր թուրքերն ու Համիարը:

Մի վախճաք, Այժմա բաց սեղ պաւկող մէկը չէ: Ան խորհրդարանի մէջ թուրքերը պաշտպանեց, Համիտն ալ իր հսկայական սեղանէն ոսկոր մըն ալ նետեց Այժմիին բերանը կրծելու:

Համիտին ի՞նչը կը պակիս ատով թո՞ղ Այժմա Սալոնիքցիները թախէ քիչ մըն ալ ան թող հարստանայ:

Ու չի պիտի վախնայ Համիտ որ իր սուած հրացանը հայուն ձեռքը կրնայ օր մը իր գէժ գոռնալ:

Ձերբակալութիւնները թուրքերու մէջ կը շարունակուին: Սարսափը և անվստահութիւնը ծանր քարի մը պէս կը ճնշէ հասկցող թուրքը:

Մոլլա-Ձիւայի Ֆէրիտի և այլոց դաւադրութեան հեքերը քանի կերթան կը տարածուին ու կը ճիւղաւորուին: Սուլթանի երկու մօտաւոր թագաժառանգ Լոքայրնիքը այս դաւադրութեան լուրէն Խաքը կատարեալ բանտարկութեան վիճակի մը մէջ են: Երկուքն ալ իրարմէ բաժնուած կը բնակին, երբէք իրար չեն կրնար տեսնալ: Ծաշն Խաքը՝ զոց կատարով մը, շրջապատուած խուճը մը զինեալ լրտեսներով (որոնք թագաժառանգներու «պահակ» անունը կը կրեն), ամէն մէկ եղբայրը սարբեր ատեն մը, առանց իրար հանդիպելու՝ կերթան քաղաքէն դուրս պատյալի մը և կը վերադառնան իրենց փառայեղ բանտերը:

Մոլլա-Ձիւան մասնադը եղբր է իր սեփական փեսան, խեղճուկ պաշտօնեայ մը, որ երբէք յոյս չունէր յառաջադիմելու: Երբ մատնութիւնը կատարեց, խեղճ Ֆէրիտ պէյլին տեղը անոր տուին... կըսուի թէ Ձիւայի աղջիկը, հոր արեան վրէժը լուծելու համար, մասնեք է իր դաւաճան ամուսինը: Տուրք խուզարկուած ատենը դտեր են քանի մը կուսկածելի նամակներ և երիտասարդ թուրքերու հրատարակութիւններ: Ուրեմն դաւաճանը կարծ միջոց ունեցաւ իր յուզայական վարձատրութիւնը վայելելու:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈՒՄ, 3/15 ԴԵԿՏ.

Անցած անգամ գրած էի թէ Անգլիական խորհրդարանի անդամ հոշակաւոր թրքաժող Այժմա Պարթէթ թոյլատու թիւն խնդրած էր Սալոնիքի մէջ ելեքարական հանրակառք և լուսատուութիւն հիմնելու: Կրած էի նոյնպէս թէ այդ թոյլատու թեան իրատէն երեւցաւ:

Բայց Տաճկաստան «Առաջ ետեւ չի» երջանիկ երկիրն է, Պարթէթ մօտ երեք ամիս սպասեց իրատէն յետոյ, վերջապէս ամսոյս 1ին միայն ձեռնարկին վերաբերեալ ամէն թողութեքը գրկուեցան Սալոնիքի սեղեական իշխանութիւններուն նոր պայմանները կապուին:

Լուր մը կը պատի ձեռնահաս չորջանակներու մէջ, լուր մը՝ որ միաժամանակ շարագուշակ և բարերար, և դժուարաճաւատալի կերեւայ ինձ:

Գիտէք որ կրտորածներու սեւ տարիներու հարկերը իբր թէ շանուեցան հայերէն: ասով բարերար Սուլթանին իբր զթառատ հայր՝ եւրոպացիները խաբելու նպատակով ներեց այդ երկու տարուան հարկը (նուիրեց ժողովրդին) իսկ ետքէն լրացուցիչ իրատեղով մը պարզուեցաւ, որ չէ նուիրած՝ այլ իբր «ապառիկ» թողնուած է հայ ժողովուրդի վրայ, առնելք մը, որ երբ ուզէ կը սեղմէ կը գանձէ:

Այժմ լուրեր կը պատին թէ այդ հարկերու փոխարէն՝ պալատը բանակցութեան մտած է Օրմանեանի հետ՝ հայերէն «գորք աններ»:

Եթէ այս լուրը իրականանայ՝ ըստի է թէ հայն ալ պիտի հրացան տանէ ձեռքը, դնդակ արձակէ, դիտուորական վարժութիւններ ընէ... վերջապէս հայն ալ պիտի վարժուի մարդ մեղցնելու արհեստին: Հայու ձեռքը որ խաչէն, արչընէն, հովուական ցուպէն ու գուլթանէն տարբեր և ոչ մէկ զէնք մտածէ՝ ուրեմն հրաշքէնը պիտի մտնայ, պիտի պայթի, ծախ ու գնդակ մայթքէ... Ե՛, Ե՛տք... այ Համիտին «տիրապետներուն» կարելի պիտի ըլլայ հայերը չունելու պէս կոտորել... Ձեմ հաւատար:

Ձիւայուորական վարժութիւններ ըրած անձ մը զիս աս չի թողլ տար իր կեանքը հանգնելու:

ՈՍՄՆ, 26 նոյեմբեր

Մեռնող վաղինակ վարդապետի թողուցած գրամի մասին չէի ուզեր բան մը գրել: բայց կը տեսնեմ թէ՞ աչուր պղտորոջ խմրագիրներ նոյնիսկ արտասահմանի հայոց միտքը կը պղտորեն: Գերմանիոյ մէջ (անգամ՝ կը կարգան «Չոյն» ի մը բազրականներ որոնք խնամիական ցած սգիով կը պախարակեն մէկը իրենց ուղածը բարձրացնելու համար: Պէտք է գիտնալ թէ Պ. Շահէնի գրչէն լուրջ քննադատական մը լիւծ չէ մինչեւ այսօր, ստեն մը սկսեց լալկան մամիկներու նման մօտենալ Ամերիկայի հայուն և աւելորակաց բուի պէս անցեալ փ... չ:

ողբալ: Այժմ ալ մեզ բոլորս նախապաշարեալ ամբոխ ենթադրելով, քառորդ դար առաջ թուրքիոյ մէջ գործածուած միջոցներով մեզ ամերիկահայերս գրգռել կուզէ ասոր անոր դէմ: Ճիշդ այդ նպատակաւ ալ է որ Վաղինակի գերեզմանէն անգամ ձեռք չի քաշեր: Իր թերթի մէկ թղթակից օրին մէկը յայտարարեց թէ Վաղինակ վարդապետ Է00 տար թողած է. իսկ Պ. Շահէնին անձամբ կը գրէ թէ 660 տար ձգած է:

Վաղինակի դործերուն մտէն տեղեակ եղողներ կը վկայեն թէ ժողովուրդը այնքան կը սիրէր և կը վստահէր վարդապետին որ շատ անգամ անոր միջոցաւ դրամ կը շրջէր հայրենիք: ու կըսեն թէ Վաղինակի թողուցած դրամի (որուն որքան ըլլալը չեմ գիտեր) մէկ մասին տէր ելլող հայեր կը պահանջեն: Սակայն ես պահ մը հակառակը կուզեմ ենթադրել. կուզեմ հաւատալ Պ. Շահէնի խօսքին թէ Վաղինակ 600 տար թողած է և այս ամէնը իրեն կը պատկանէր: Եւր է այդ դրամը այսօր. չէ՞ որ Փրօվիտէնսի հայերու քսակէն ելած էր այդ դրամը և ըստ օրինի Փրօվիտէնսի հայերը ամենամօտ ժառանգորդներն էին իրենց սիրելի վարդապետին, ուրեմն ինչո՞ւ Սարածեան Լպիկոպոս արծիւ պէս վրան հասաւ ու ինք ժառանգեց 600 տարը: Եթէ անկեղծ էք ու գրածնիդ ճիշդ է, ես ալ առա-

ջարկմը ունիմ, մենք գիտենք թէ հայրենիք մէջ շատ մը անտէրունջ որբեր կան և թէ 25 տարով որբ մը կը պահուի ու կը դատարարուի ամբողջ տարի մը, 600 տարով 24 որբ կտրելի է պահել՝ ուրեմն յանձնեցէք այդ դրամը Փրօվիտէնսիներուն ու թող անոնք ի յիշատակ իրենց սիրելի վարդապետին որբեր պահեն նոյնիսկ ձեր քաղաքին, Վանի մէջ, Պ. Շահէնի:

Բայց Սարածեանի կսկորդէն բան դուրս քաշել շատ դժուար է մանաւանդ երբ լսմազիր մոլեռանդներ պաշտպան ունի: Ունոյն ատեն կը պատարակեն Վաղինակ վարդապետ սր դրամ թողուցած է: Ո՞րն աւելի վատ է. դրամ թողուլ, թէ թողած դրամը ժողովուրդին ու որբերու ձեռքէն խլել կսկորդը ձգել:

ԼԷ0

ՊՈՒՐԿԱՉ, 2 ԴԵՍ.

Մշոյ առաջնորդարանի կըսը դուրս գալէն ի վեր ամէն կողմէ նամակներ սկսան սեղալ մշեցիները ամենալատ ժողովուրդը: Մշոյ տալու չափ առաջ երթալով Մենք, ինչպէս մշեցի, հետեւելով ատոնց մանրամասնութեանց միայն «Շարժում» 183 թիւին առաջնորդողը անկողմնակալ գըտանք:

Անցնինք այդ կէտը և կանգ առնենք «Շարժում» 184 թիւի նաչէն գրուած Արմախի ստորագրու թեամբ յօդուածին վրայ:

ԵԳԻՊՏԱՅԱՅ ՔՐՈՒԿ

ԲԱՅ ՆԱՍԱԿ
ԵԳԻՊՏՈՍԻ ՍԵՑ-ՍՂԱՆԵՐՈՒՆ

ԱՌԱՋԱՆՈՂՊԱԿԱՆ ՀԱՐՅԻՆ ԱՌԹԻ

(Յուսարով որ կը գտնուի հայ մը որ արձնուի հեթանոս քրիստոնէի քարգանակը, հաղորդի զայս իրենց)
Վսեմաշուքնե՛ր,

Նորէն ձեռք ատեր էք առաջնորդական խնդիրը և չէք ուզեր ըմբռնել արդար զայսոյ թը, զոր ամէնքս կզգանք երբ անգիտակցաբար կը գաւազրէք մեր ազգային կենսական իրաւունքներուն դէմ: Կուզէք վերընտրու թիւն ընել, պահ մը վարանումներ կուեննաք հանրային ձայնին առջև, որուն արձագանքը գէջ կը հնչէ ձեր ականջին: Արհամարհանք զոր ունիք ժողովուրդ կոչուած ամբոխային զանդուածին դէմ, չը կատեցներ ձեր խիզախ քայլերը, որոնց տակուսութեան գծազդ օրինակները աւաղ, զեռ շատ թարմ են մեր մտքերուն մէջ, «Քիչկիչկիչներուն» առթեմ ապաւորութեան տակ: Կրնան ձեր վարչական հմտութիւնները օգտակար ըլլալ Եգիպտական կառավարութեան, բայց ազգային դործերը վարելու մասին ձեր ունե-

ցած գիտութիւնը կուսածել կուսայ մեզի ձեր այդ վարչական հմտութեանը վրայ ի կ:

Պատիկ վերջնամ մը ձեզի՝ ձեր կարգ մը հակառական սրբաբնու մասին, լոկ առաջնորդական վերջին խնդրոյն առթիւ, քանի որ օրուան նիւթն այն է:

Ձեր հաւանութեամբ չէ՞ր որ, Աղքատներու նախորդ թագական խորհրդոյ բանիմաց մէկ անգամը 1887 ատուոյ զեկտեմբեր ամսոյն մէջ դիմում կընէր ամենապատու իղմիւրեան սրբազանի, ստանալու համար իր հաւանութիւնը, ի սպաս Եգիպտոսի առաջնորդական պաշտօնին:

Սոյն հաւանութիւնը ստանալէ վերջ, առանց լրջօրէն բառնալ միտելու կարգ մը խոչնդոտներ որք ձեր առջև կը պարզուէին, զուք չէ՞ք որ ձեր 1888 ապրիլ 5ին գուամարած ժողովին մէջ միաձայնութեամբ ընտրու թիւն մը կատարել յետոյ պալս ժէնիւական գրութեամբ նորութիւն մը մտցուցիք մեր Սահմանադրութեան մէջ, «Կատար» մըն ալ կցելով—գոգեւս իրրեւ հեղուութիւն—ընտրելին քով:

Դուք չէ՞ք որ երբ Օրմանեան և զաւաղիւնները—Տասեան և նորատու նիւան—խնդիրը քննարկելու մըտք գտեր կը լարէին և ձեզի հրաւեր կը կարգային, ձեզի տակ, շատ չը ծանրանալու այդ հարցի մասին, առարկելով թէ «բարձրագոյն շրջանակաց մէջ լու սպաւորութիւնը չը թողուր այդ ընտրութիւնը և նոյն իսկ կը ջլատէ Պատրիարքարանի «անընդհատ» ջանքերը ինչպատ

Պարոն յօդուածագիրը կոկորդիլոսի արտասուքներ թափելով իր ստիտատութեան մէջ բաւական յառաջ կերթալ և իբրև առաջնորդ մշեցիի ներքին կեանքը, զանոնք շատ վատ դրութեան մէջ կը գտնէ և ցաւելով խորհուրդ կուտայ, կը յանդիմանէ և, առանց բացառութեան, մշեցի այդ տարրը անբարոյականութեան տիրմի մէջ թաւալած կը տեսնէ:

Պարոնը Ռումանիոյ մէջ ապրելով այդ երկրի մշեցի պանդուխտներու կեանքը իր իսկական հիմունքներով ըմբռնած կը կարծէ և կելլէ ստայօգ գրութիւնովը հարիւրաւոր սուտեր կը յերիւրէ: Ինչպէս կերելի ինչը մշեցի չէ, մշեցիի նման նահապետական կեանք չէ վարած, անոր ընտանեկան յարաբերութիւններուն, երկրին և նոյն իսկ իր բազմակողմանի տառապանքներուն անտեղեակ: Հետեւաբար լոկ հարեւանցի հայկացիներով իրաւունք չունի այդ ամբողջ գասակարգի կեանքը միքանի գատարկագորտներու վրայ շարժել:

Մշոյ առաջնորդական տեղապահ Բարկէն վարդապետը հրաւեր կը կարգար մշեցիներուն (երկու ամիս պայմանաժամ տալով) հայրենիք վերադառնալ, հակառակ պարագային իրենց ամուսիններուն կրկին ամուսնանալու հրաման տալ կսպառնար. այդ կօշը կը լինի աչնան ժամանակներ, մտաւորապէս սեպտեմբերի

վերջեր: Մինչդեռ ապրիլէն սկսեալ մինչ այժմ, հարիւրաւոր մշեցիներ իրենց հայրենիք երթալու միջոցին կարգիլուն և Տրապիզոնի թրքական բանտերու մէջ յետին ծայր թշուառութեան մէջ կը հեծեն: Ամէն օր աղխարը նամակներ կը հասնին մեզ, որոյ մէջ կողբան իրենց դրութիւնը: Պարոնը փոխանակ ամէն յանցանք մշեցիին վերադրելով անոր բարոյականը արատաւորելու, աւելի լաւ կընէ Բարկէն վարդապետի հետ ճար մը որոնեն այդ հարիւրաւոր թշուառներուն կամ յառաջ երթալու կամ ետ գալու:

Մշեցիի կեանքը ուսումնասիրող դիտէ որ, սակէ 3—4 տարի առաջ (Պոլիս եղած միջոցնուն) ամէն ամիս հազարաւոր ոսկիներ կը տեղադրէ Մուշի դաշտը և ատոնք ամէնքն ալ անոր ճակտի քրտինքն էին: Իսկ այժմ ինչ կարող է ընել նա երբ շահու աղբիւրները իսպառ ցամքած են Ոչինչ:

Կալով յարգելի պարոնի ակնարկած մշեցիներուն, Գանուրի կղերքները, այսինքն Սիւլիւնա, Կալաց, Պրաիւա, Եւա և այլն հարիւրաւոր մշեցիներ կը գտնուին, որոնք ամբողջ տարուան մէջ հազիւ մէկ երկու ամիս կսխախտին, միւս ժամանակները պարտաւ կը սպասեն զորը չըլլալուն պատճառաւ: Ամէն տեղ թշուառութիւն, անգործութիւն կը տիրէ և ատոնցմէ իւրաքանչիւրը 50—60

այսպէս կը խաղցնէր ձեզ ու ձեզ նեւ ամբողջ ժողովուրդ մը, «միւսկար տըթը» ընելով ձեր տեղեկագրիք ու հանրագրութիւնները: Մինչդեռ իրրեւ Սահմանադրական Պատրիարք պարտաւոր էր նոյնութեամբ Դրան մասուցանել զանոնք (որուն միայն անկ էր վճռել անոնց ընդունելութիւնը և կամ մերժումը), և կամ պարտաւոր էր յետոյ զիւ զանոնք ինչ զաւտական վարչութիւնը բնարական ձեւակերպութեանց մէջ թերիներ նշմարած չէր:

Օրմանեան ժողովրդականալու երազին բռնուած, աշխատեցաւ ամբաստանելու ժողովրդական անձնաւորութիւն մը ու Դրան առջև կատակած ինք կայացնելու տքնեցաւ կեղեկեցական մը որ պաշտօնապէս ունէ արատաւորում չէ կրեր: «Իր այդ զաւրին համար լաւ գործակիցներ եղաք», այդպէս յարգանք ընծայեցիք անոր որուն նուիրեցիք ձեր քուէներկու տարի առաջ:

Ու երբ հակասա՛ւան չէ եղած ձեր ընթացքը, ձեր բովանդակ գործունելութեանց մէջ:

Որիւնիս չենք լսած ձեր բերնին թէ՛ դուք կը բողբաք ունենալ այնպիսի առաջնորդ մը որ ձեր գերին, ձեր խնկարկուէն ըլլայ, և ոչ թէ ինչէն ձեր վրայ և վերին հսկողութիւնը ստանձնել տեղոյն վարչական գործունելութեանցը: Կը հասկնանք ձեր հայեացքը, ներքին հաշիւներ ունիք ու թերիւս Փառքի ինչպողողներ ալ էք:

Մեզ համար, մտնաւանդ ներկայ բռնաբարութիւնը ժամանակամիջո-

ընտրեալ եկեղեցականին, և թէ Եգիպտոսի վարչութիւնը անվայելուչ գործ մը ըրած է վարդապետ մը պէս քուէարկութեան ներթարկելով նախորդ Պատրիարք մը... և այլն»: Դուք չէ՞ք որ, իրրեւ չքմեղանք հանցիկ Օրմանեանի, մեծ ստախօսութիւնը գործեցիք, համարձակելով մինչեւ անպէս մը պատկերացնելու ստտիճան իրբը, որպէս թէ նոյնիսկ Իգմիւրեան սրբազանը ինքզինքը ընտրելի ներկայացուցած ըլլար:

Երբ Օրմանի այս վատ միտումները չեղքացնելու աշխատած ըլլալուն համար՝ Կեղր վարչութեան կրօնական ժողովոյ երկու ատենապետ սրբազանները Բարձրագոյն Դունէն զիտողակր կընդունէին, զուք չէ՞ք որ, ոչ իսկ օրինական ժողովոյ մը մեծամասնութեան ձայնը ներկայացնելու, յանուն գաւառական վարչութեան, «չինձու պաշտօնագիր» մը յղեցիք Պատրիարքարան, նախորդ տարուոյ այս օրերուս, խնդրելով Պատրիարքարանին ընտրելեաց ցանկ մը նորոգ ընտրութեան համար:

Ու երբ տեղոյս առաջնորդական տեղապահը, ժողովուրդին միտումնոք բաղձանքովը զօրացած էր օրինական սղուովը: Օրմանեանի վատիկանական մեքենայութեան լարը կը խանդարէր, զուք չէ՞ք որ կէս գիշերուն նորա շիւանդ վիճակին մէջ, իր դուռը ափ առիք, կիրպով մը տեղապահութեան պաշտօնին իր հրաժարականը պահանջելով, որպէս զի անսայթաք ու անարգիլ գործակցիք Օրմանեանի, որ երկու տարի

բանակցութիւններու մէջ է, 15
—20 միլիոն ֆրանքի փոխառու-
թիւն կ'ընելու:

Մակեդոնական Բ. գոմթիւնի օտ-
կանը կը հազարդէ որ հիւսիսա-
յին Ամերիկա գաղթած պուլկար-
ներ Նոթթի-Վատմ. քաղաքին մէջ
Մակեդոնական յեղափոխական
կազմակերպութիւն մը հիմնելու
էնչպէս անունով, որոյ նպատակն
է նիւթական միջոցներով օգնել
Սօֆիայի Մակեդոնական Բ. գո-
մթիւնին և Ամերիկայի մէջ գա-
ղափար տարածել Մակեդոնիայի
ազատութեանը համար: Աւրա-
խալի է որ իրենց հայրենիքէն
հեռանալով հանգերձ՝ հայրենի-
քին գործին աշխատողներուն նե-
ցուկ ըլլալու բարձր գիտա՛ցու-
թիւնը չեն մոռցած:

Թ. Գ. Ա. Կ. Ի. Յ.

Ա. Զ. Դ.

Տօթթիւնը Ալ. Աթաբէկեանց կը
խնդրէ մեզ յայտարարել, որ ինքը
միայն ազգասէները ձրի կը դար-
ձանէ:

Ինչպէս կերևի ունեւորներ ալ
ձրի կուզեն բժշկուիլ, հիմնուե-
լով այն փողոցային լուրերու վրա,
որ իբր թէ Աթաբէկեանց հոս
զրկուած է ձրի բժշկելու համար:
Աթաբէկեանց ոչ ոքի կողմէ չէ
զրկուած հոս. իբր բժշկ պիտի
ապրի իր աշխատանքով:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թուրքերէն «Աէրվէթ» լրա-
գիրը կը հազարդէ թէ Խրիմեան
կաթողիկոս ծանրապէս հիւանդ է
Թիֆլիսի մէջ:

Պատրիարքարանը տեղեկու-
թիւն չէ ստացած ոչ կաթողիկոսի
Թիֆլիս ժամանելու մասին և ոչ
ալ հիւանդ լինելու:

Այնպէս որ Խրիմեանի հիւան-
դութեան լուրը պաշտօնապէս
հաստատուած չէ:

— Կաթողիկոս Խրիմեան կ'օն.
Ժողովին նամակ մը գրած է Մուշի
լքեալ կիներու մասին, որով
յայտնած է թէ՛ այդ խնդիրը
լուրջ կերպով պէտք է ուսումնա-
սիրել, որովհետեւ եթէ կան
լքեալ կիներ, կան նոյնպէս և
լքեալ այրեր: Վերջապէս Վեհա-
փառը յանձնարարած է որ ոչ թէ
ափ յափոյ, այլ ընդերկար ու-
սումնասիրելով մանրամասն սե-
ղեկագիր մը պատրաստուի այդ
լքեալներու վիճակին վրայ:

Կրօնական Ժողովը շնորհակա-
լութեամբ լսեր է Վեհափառին
կարծիքները և առարկութիւնը
ու որոշեր է հազարդել Մշոյ Բար-
կէն վարդապետին:

— «Թան» Նոյեմբեր 26ին Պօլ-
սէն Ալաշկերտի մէջ եղած խոռ-
վութիւններու յմասին հետեւեալ

մանրամասն տեղեկութիւնները
ստացած է. 120 հայերէ բաղկա-
յած խումբը Աստուր գիւղը
մտնալով եկեղեցիին մէջ տեղա-
ւորուեր է. վերջը գայմադամ,
զօրք և քիւրտեր եկեր եկեղե-
ցին պաշարեր են: Հայ խումբը
դիմադրեր է կուրտը և գայմա-
զամը սպաննելով: Խումբը յա-
ջողեր է գիշերը փախչել:

Յետոյ քրդերը յարձակելու են
քանի մը գիւղերու վրայ և 300
հոգի կտորել են, սակայն շուտով
վանայ և Պիթլիսի զաւիճները
հեռագրած են քիւրտ զլխաւոր-
ներուն, որ չը համարձակին հայ
ժողովրդին ֆեսաւլ, եթէ ոչ Պօլ-
սէն հրաման ստացած են կանո-
նաւոր զօրքով յարձակիլ քրդե-
րուն վրայ:

Այդպիսի կարուկ ճամբով
կրցեր են քրդերը զսպել:

Ասիկայ փաստ մըն է, որ Սուլ-
թանը միշտ կ'ընայ զսպել քրդե-
րը, եթէ բարեհաճի:

Սակայն «Թան»ը շատ գէշ կը
նկարագրէ տեղւոյն հայերու վի-
ճակը և կըսէ որ անոնք այնքան
խնաւու են, որ կտորածը ի-
րենց համար աւելի լաւ կը հա-
մարեն քան այն կեանքը, որով
կապրին:

— Բուսանիայի Կալայք քաղա-
քէն 13 հոգի ի ստորագրութեամբ
նամակ մը ստացանք որով Մշե-
ցի եղբայրները կը հազարդեն
թէ՛ իրենք առաջ՝ հայրենիք
գրամ կը զրկէին «փոլիցաճիտ»
ների ձեռքով, որոնք զկղզու-
ներ ճընէին. յետոյ կ'ըստ են
Պատրիարքարանի միջոցաւ, ան
ալ շատ ուշ տեղը կը հասցնէ ե-
ղբր: 98 թուականին 1200 սոյի
զրկած են. իսկ այս տարի եթէ
չեն զրկած պատճառը այն է որ
իրենք ալ չունին, և մանաւանդ
որ զրկուածները տեղերին չեն
հասնիր: Յետոյ իրաւամբ կը բու-
ղձեն անոնց դէմ, որոնք հրա-
պարակաւ բոլոր մշեցիները կը
դատապարտեն քանի մը սրիկա-
ներու համար:

Արդէն նոյն բովանդակու-
թեամբ և աւելի լաւ խմբագ-
րուած նամակ մը ըլլալով պարոն
Չաթոյեանի կողմէն, յարմար
գտանցինք Կալայք գտնուող մշե-
ցիներու նամակի միայն բովան-
դակութիւնը զնել:

— Քէօստէնէն մեզ կը գրեն
թէ Մեսրոպ Հալաճեան, Քղի դա-
ւառէն, թուրք զօնսիրի հեա
կանկաճելի յարարերու թիւննե-
րու մէջ կը գտնուի:

Ն. Ս. Մ. Ա. Կ. Ս. Ո. Փ.

Կալայք, Անտոն Սոյումնեան. —
«Իրաւունք» խմբագրութիւնը
չեւ մեզի չէ յանձնած ձեր զբը-
կած մեր հաշտոյն 10 ֆրանքը.
յետոյ «Նարժում» տարեկանը
արտասահմանի համար 12 ֆրանք
է. կը խնդրենք հաճեցէք շու-
տով կարգադրել:

— Բնիկ Ա. Պօլսեցի. Պ. Թադէոս
Գէորգեան որ գրեթէ երկու տա-
րի առաջ մեկնած է. կը խնդ-
րուի ամէն անոնցմէ որոնք սր
տեղեկութիւն ունին հաճին խըմ-
բայրութեան իմացնել:

Ասիկայ գրեթէ 3-4 ամիս ա-
ռաջ անոր Ռուսանիոյ մէջ գըա-
նուիլը իմացուած է:

— Տարտանէլցի Խաչիկ Յ. Ա.
ճէմեան անուամբ պարոնը որ ժա-
մանակաւ նիւ-եօրք կը բնակէր,
ուր որ է՝ թող հաճի իր հասցէն
զրկել խմբագրութեանս, կամ ով
սր գիտէ անոր տեղը՝ թող հաճի
նոյնպէս իմացնել մեզ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ ներքին գործերու նոր
նախարար Սպիակին Չարին ցան-
կութեանը համաձայն՝ սկզբուն-
քով որոշած է վերցնել մամուլի
աղատութեան խոչնդոտները և
լրագիրներուն թոյլ տալ վիթա-
բանիլ կառավարական գործերու
մասին:

Ի միջի այլոց նոր նախարարը
մամուլի քանի մը յանցանքներ
պիտի յանձնէ սովորական իրա-
ւարարութեան, պիտի վերցնէ
երաշխատութիւնը և բարեփո-
խէ զգուշացնելու կանոնը:

Հիմա երեք անգամ նկատու-
լով թիւն ստացած լրագիրը
իսկոյն կը դադրի, այս պայմա-
նը պիտի վերանայ:

— Ռուսական «Կարմիր Խաչի»
Թրանսիլալ ուղևորող բաժնիւր
արդէն պատրաստ է և շուտով
ճամբայ պիտի ելնէ. Ինգերս-
պուրի հօրանտական գոմթէն
Պօէրներու համար արդէն 90,000
րուպլի հաւաքած է. հանդանա-
կութիւնը դեռ կը շարունակուի.
նուսնելու և ուս լրագիրներու
համակրանքը դէպի Պօէրները
աստիճանաբար կը բարձրանայ:

— Փրանսական զեղարուեստ-
ներու նախարարը ցուցակ մը
պատրաստած է տղային պա-
լատները և նախարարատուները
1900ի ցուցահանդէսին պատճա-
ռաւ զարգարելու համար: Ըստ
այդ ցուցակին 2,215,518 ֆրանք
պէտք է:

— Ռուս հոշակաւոր գրագէտ
Թօլսթոյ տկար է. բժիշկները այդ
հիւանդութիւնը կը վերագրեն
մեծ մասաւր յոգնութեան և բան-
ճարեղէն կերակուրներուն, որ
Թօլսթոյ շարունակ գործ կածէ և
հիմա անգամ չուղեր թողուլ այդ
սովորութիւնը:

— Անգլիական ժէներալ Գա-
տակը Ետովպիլի մօտ յայ-
թուեր է պօէրներէն, իւրուե-
լով իր ուղեցոյցներէն: Պօէրները
գերած են 600ի շուրջ անգլիա-
ցիներ:

— Ժէներալ Պիլլէր Լատսի-
տի հետ յարարերութեան մէջ
մտած է: Լատսիտէն՝ պաշա-
րուած անգլիական զօրքէն խումբ

մը դուրս եկեր են յաջողու-
թեամբ և նորէն ներս մտեր են:
Նոյնպէս կէմպրիլէյէն անգ-
լիացիք կրցեր են դուրս ելլալ:
Լատսիտի պաշարը հասնելու
վրայէ, այսուամենայնիւ կը
կարծեն թէ Պիլլէրի զրկած
զօրքերը պիտի կրնան Լատսի-
տը ազատել:

— Անցեալները Թրանսիլալ
գալոյ անգլիական զօրքերը
այնպիսի զգեստներ կը կրեն որ
բաւական հեռու տարածութեան
վրայ չը պիտի տեսնուին:

Ամբողջ զգեստներ և վրանին
կրած իրերը, զէնքերը այդ-
գոյնը պիտի ունենան, որ ոչ
կանանչ է և ոչ զեզիւն, այլ եր-
կուքը խառն. այդ մասնաւոր
գոյնը «կհագրի» անունը կը կրէ:
Այս գոյնով ծածկուած բաները
երեք հարիւր մէթրի վրայ չեն
նկատուիր:

— «Տայլ Մայլ» անգլիական
թերթը կը հազարդէ թէ Տար-
ֆուրի Սուլթանը իր հպատակու-
թիւնը յայտնած է եզրպտական
կառավարութեան:

Շուտով Տարֆուրի և Կորտո-
ֆանի համար կառավարիչ պիտի
նշանակուի:

— Ինչպիսիական թերթ մը լըսէ
թէ անգլիացիներուն մինչև հի-
մակ ունեցած Լորուսը Թրանս-
վալի մէջ կը հաւասարի վաթիւր-
լոյի քով եղածի երկու եղբոր-
դին: Մինչև հիմա 4750 գերի
բռնուած, սպաննուած և վի-
րաւորուած զինուոր կայ:

ՏՕԲԹ. Պ. ՕՐՄԱՆԵՆ

Նախկին Խաչիկոյ Կալ. բժիշկ

Հաստատուած է իր բնակութիւ-
նը ի Թիֆլիսի Պուլկարական պան-
քայի մօտ, ուր կընդունի ամէն
օր ժամը 9—12 և 2—5 հիւանդ-
ներ և կը դարմանէ մասնաւորա-
պէս ծննդական գործարանաց,
կանանց և արտաքին հիւանդու-
թիւններ, կը կատարէ նաև ա-
մէն տեսակ վերաբուժական գոր-
ծողութիւններ:

Տօրեքշարթի օրերը կէս օրէ
վերջ ժամը 1—3 ազգասէները
ձրի կը դարմանէ:

Յ. ՃԱՆԿԻՒԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԱՆ

ԻՐԱՎԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիւ 389 Իսկիզի-պաշի

Կը վաճառուի ծրարտու, բովան-
կե աղբրագրի ամէն տեսակ բուքի
նաև զանազան տեսակ սիկարներ:
94 թուականին հրատարակ ելած
Պուլկարայի զսնտատանց Պօրիսի
պատկերագրք քաթ-փօսթալներ,
որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս
և կը վաճառուի «Շարժում»:
Շարժումը կը ծախուի նաև նա-
մակատան զինաց նոր բացուած փե-
րիկ գրատուներ: